

Յ Ո Ւ Ն Օ Ն

ՊԵՐՃ ՊՈՇԵՍՆՅԻ

(Շարունակութիւն ¹)

Զ.

— Դէհ, շրապենք՝ քանի որ կայ, ասում եմ ծառայիս, այլ ևս առաջներին գիւղերը մտնելու չենք, այս գիշեր իջեանք Ա. գիւղի տէրտէրի տունն է. ամենայարմար սենեակն է ողջ Նոր-Բայազիդի գաւառի գիւղերի մէջ, քանի օգնականը չի եկել, մենք մեզ համար տեղ-խլուկ անենք:

— Աւելի լաւ չի՛ լինիլ, աղայ, փորձանքից հետո կենանք, մեր ճանապարհը շարունակինք, ինչպէս մտքումդ դրել էիր, ևս գիշեր առաջներին գիւղումը մնանք. թող օգնականը գայ, անց կենայ, թող փորձանքը հեռանայ:

— Մի գիշեր էլ լուերի ձեռքից հանգստութիւն չտեսնենք:

— Եթէ ուզում ես լուսն քեզ չընկացնի, հրամայի՛ դուրսը, օայլի վրայ քեզ համար տեղաշոր քցիմ, կնպէս քնես, որ էգուց արեւը ճաշուայ տեղը գայ՝ դու դեռ զարթնած չըլինիս... վայ, վայ, վայ, խօսքը փոխեց ծառաս, աղայ, աղայ, մի չեմ մտիկ տուր տես էն ինչ փոշի է բարձրացել... այ, այ, այ... ինչ շաւոր եմ, հնց եմ քշում...

¹ Սկիզբը Մուրճ 1900 թ. № 1,

Յեւր նայելու ժամանակ շունեցայ, մէկը ձին լցրած՝ ետեւիցս հասաւ, սուրը գլխիս շողացրեց ու գոչեց.

— Զը՛, հնց ես գլուխդ հաւի ձագի պէս թռցնեմ, Դու քանի գլխանի ես, որ էսպէս գլուխը մի սոխ ժամանակ՝ մի ծառայի յուսով անահ, աներկիւշ գաւառն ես ընկել, մանգալի:

— Ընչի՛ պիտի վախենամ, ծիծաղելով պարասխանեցի ես, քեզ պէս ձիաւոր ունիմ երես քցած, դողը որ կը գայ, ինքս չեմ կը քաշուիմ, քեզ կը հրամայեմ հետը կռուելու:

— Լաւ պարասխան էր, ծիծաղելով թուրը պարսեանը Դրեց իմ վաղածանօթ օգնականն և աւելացրեց.

— Հանաքը մի կողմը, մի յետ նայիր:

— Այս յառնջ բարին, աշխարհքն ետեւիցս ես ձգել, Օսմանցուի երկիրն այս կողմն էլ չի, թէ ասեմ՝ գնում ես Եւրոպ քեօշքը ցաք ու ցրիւ տալու:

— Լաւ նմանացրիր, հաւանեց սրախօսութիւնս օգնականը, գնում եմ մի պստիկ Եւրոպ քեօշք հիմքից քամուն տալու. եթէ կուգես՝ ինձ ընկերացիր, դնանք էս գիշեր Ա. գիւղը ու բարի աչքովդ կը տեսնես այնտեղի Եւրոպ քեօշկի երկիրն անհանգիստ անող բռնակալին:

— Ուղղակի Ա. գիւղն եմ գնում ես, ասացի, ինչ արած՝ լուերը հողիս հանեցին, մարմինս որ տեսնես, կը կարծես, թէ ծաղիկ եմ ընկել. իսկ Ա. գիւղի քահանային, ասում են, մաքուր սենեակ ունի, մի գիշեր, գոնէ, հանգիստ աչքս փակեմ:

— Իրաւ է, պարասխանեց օգնականը, միակ յարմարաւոր սենեակն այս գաւառում՝ Ա. գիւղի տէրութիւնն ունի, ես էլ այնտեղ պիտի իջնեմ, թէեւ քիչ փոքր է, բայց երկուսիս կը բաւէ, մանաւանդ, որ Դժուար՝ թէ ես այս գիշեր միջոց ունենամ ծածկի տակ մփնջելու:

— Ասա, ուրեմն, տեսնենք՝ ընչո՞ւ ես հարիւրի չափ ձիաւոր ետեւդ դցել:

— Ուրեմն Դու չըզդրեմս, Ա. գիւղումն է աւազակների թագաւորի Եւրոպ քեօշկը:

— Որ ո՞վ լինի:

— Յունճն, Յունճն, աշխարհքը տակ ու վրայ շրջող անիծածը,

որ մի քանի տարի մեզ ոչ քուն է տալիս, ոչ հանգիստ: Յոյս Աստուած, վերջապէս, այս գիշեր կազատուինք այն գողանից, այն առիւծից: Կամ վանդակում կը կապենք, կը կաշկանդենք, և կամ մի կտոր արծճի (գնդակ) շուրքան կանենք: Իսկ երբ զազանների թագաւորը կը զլորուի, նրա սպորադեալ գաջլ ու աշուէսներին, մեր շներն էլ կարող են խեղդորել:

— Իսկ եթէ Յունօն ու իր ընկերները բռնուին, աւազակների հոգը կը կտրուի՞ ձեր գաւառիցը:

— Քեզ կարող եմ հաւատացնել, որ չըլան ուրիշ աւազակներ, որ Յունօյի պէս աշխարհ հոգւոցնեն, էնքան լինի՞ Յունօն իր խմբով մեր ճանգն անցնի, ոչ թէ միայն մեր գաւառը, մեր հարեան Սիսիանն ու Գարալագեաղն էլ կը հանգստանան և...

Օգնականը մոռացաւ իր խօսակցութիւնը, տաննահնգի չափ հետեակ գիւղացիք շիմացի լեռնաթմբից ցած եկան, գլխարկները հանեցին, զլուխ իջեցրին ու առջիւ շարուեցին:

— Ուրբերիդ մեռնեմ, աղայ, խօսեց նրանցից մինը, ճար ունիս՝ տես, չըկայ երկու ժամ՝ եօթն աշխարհ արեւը մարդ կ'էրէր, երեսուն ձիաւոր, սիլահ, ասպաալ (զէնք) կապած, այնալու թուամբները (սիւսդի հրացան) կաներից կախ՝ մտան մեր ոչխարի մէջ, հարիւր զլուխ մնաց ոչխար ջոկեցին, դրին իրանց տաւը, քշեցին, սարն անցկացան, ընկան Գարալագեաղի սինուռը (սահման):

— Դուք ճրտեղից էք, հարցրեց օգնականը:

— Հրամանքիդ արգ անեմ, մենք վերի Ա. գիւղիցն ենք. ոչխարը քշում էինք գիւղը կթուելու, երեք չորս սուրու (հօտ) իրար ետեւից գալիս էին ու գոշերն եկան, տոլին, տարան, մեր տունը քանդեցին:

— Յետոյ դուք լաւ տեսմք, որ թուրքեր էին:

— Աւուրբան քեզի, որ թուրք չըլինէին, ընչի՞ գողութիւն կանէին:

— Օգնականը երեսիս նայեց, ծիծաղեց և հարցրեց.

— Ասում էք՝ ոչխար չափ տարան հմ:

— Շատ, շատ, մե'ռնեմ քեզի, 100, 500, 200, 700...

— Տօ, տնաւեր, բերանիցդ հօ քրեհ չեն ուզում, խօսողի կող-

քին բոունցքով թրխկացրեց կոնադակից մօտին կանգնողը և կամաց փափաց, կը մեռնեն, որ ասես 1000, 2000,

— 7000, 6000, 5000... շփոթուած կակազեց խօսողը:

Օգնականը շարձեալ աչքով նշանացի արեց ինձ և ասաց.

— Տղէք, լաւ տնորշեցիք աւազակներին, Յունօն մէջերը հօ չէր:

— Աստուծաւ սէրն, աշնչ, Յունօն մեր եղբայրն է, մեր արիւնան (հօլանաւոր) է, Յունօն մեզ փնտս կը տան:

— Ասում էք՝ երեսները լաւ տեսաք ու ճանաչեցիք, որ թուրքեր էին:

— Հոգուս մէջք չեմ անիլ, աշնչ ջան, մէջ մտաւ մի սպիտակամօրուս ծերունի, Երուսաղէմ գնացած՝ լոյս Գերեզմանի լոյսը տեսած մարդ եմ, քօ գլուխն եմ երդուում, որ թուլիկների (աւազակ) երեսը չըկարողացանք տեսնել, գլուխները ըաշլուղներ էին փաթաթել, կը նմանէին մեր Սեանայ հայր սուրբերը: Մեղնչ Աստուծաւ, միներ, թէ որ յեղին չուխայ չունենար, սե հաղած լինէր, ես կասէի՝ հերուան իւշ ու պանիր հաւաքող հայր սուրբն էր, որ մեր տանն իջած էր:

— Հալիւճր, մօրուքիցդ չես ամաչում, աւազակին վարդապետի ես նմանացնում, միջամտեցի ես:

— Ես մեղնչ Աստուծաւ, աշնչ ջան, ծեր մարդ էի, աչքերս լաւ չէր տեսնում, կը բաշխես սխալութիւնս, զղջաց մարդը:

— Տղէք, ասաց օգնականը, ձեր պատմած աւազակների ձիանց մէջ ճակարը ծաղիկ, կարմիր մատակ կան:

Օգնականի տուած հարցի վրայ ես խիստ զարմացայ. Նադօյի մարտիկի ճիշդ նշաններն ին

— Կար, աշնչ, կար, բայց քո ասածը չէր, յրականապէս շեշտեց մի երկրասարդ, որը ըստ երևութին՝ որոշուում էր իւր շարժմունքներով ու արտաքինով իւր համադրւողներէից և նկատուում էր, որ փոքր ինչ տաշուած է:

— Ես ինչ եմ ասում, խոժոռ ղէմքով շարձաւ երկրասարդին օգնականը:

— Հրամանքդ Յունօյին ես կարծում, բայց մեզ կողոպտողների մէջ ոչ Յունօն կար և ոչ իւր մարդիկը. բոլորը շարաքաղցի թուրքեր էին, լուրջ խօսքերով պատասխանեց երկրասարդը:

—Դէ, անսիրտաններ, գոռաց յանկարծ օգնականը, որես՝ Բեյ-պէս խօսքը մէկ արած՝ ուղղում են պաշտպանել աշխարհաւեր աւազակապետին, ես ձեզ բոլորիդ բանտումը կը փթացնեմ, եթէ ճշմարիտը չասէք. նշաններից երևում է, որ Յունոն ինքն է եղել, որ աչքներդ հանում է, տարին՝ 12 ամիս՝ հացերդ ուտում է ու երեսը ծածկած՝ ձեր ապրանքը տանում: Ձեր ոչ մի խօսքին հաւատ չի կարելի ընծայել, ասում էք երեսուն ձիաւոր էին ու չիմարաբար չէք մտածում, թէ այդքան մարդը հազարաւոր ոչխար չի կարող ձիու թամբին Դրած փախցնել:

—Տօ՛, աղւյշ, զլխիդ մեռնեմ, մենք որ կանք՝ երկու ոտնանի անասուն ենք, մենք հազարներ տեսել ենք, որ հազարների հաշիւ տանք, թէ հրամանքդ գիտես, որ շատ ասացինք, հրամայի՛ր քսան շինենք. վերջանայ գնաց, ասաց միւսը:

—Այ, հիմի խելօք ես խօսում. լսեցէք՝ երբ որ սլէստչին (քննիչը) կը հարցնի, 25-ից աւելի չասէք և ցոյց տուէք, որ Յունոն ինքն էր: Եթէ այդպէս կը վկայէք, ես ձեզ կը պաշտպանեմ ու 25-ի տեղ՝ 50 ոչխար ձեզ կը հասցնեմ: Խսկ եթէ Յունոյին չէք ցոյց տալ՝ ճիպտի տակ ձեզ կը մահացնեմ:

—Բաշ ուստի, աղայ ջան, քո խաթեր՝ Յունոն էր՝ որ կար. ան, Աստուած նրա կնոջը կոտորի, երևում է՝ քնաւեր Յունոն ուղղում է ոչխար պահել. շան զարմն իմ փռչկակալած, լսի պէս ճերմակ սէչիգս էլ տարաւ:

—Եւ, ի հարկէ, լաւ ճանաչեցիր, որ Յունոն էր, Յունոն, Ա. գիւղացի Յունոն, էնպէս չէ, շեշտեց օգնականն երեք անգամ:

—Ո՛չ, Յունոն չէր, ձայնը բարձրացրեց հասկացող երիտասարդը, ես նորից կրկնում եմ, որ Յունոն չէր, թուրքեր էին:

—Դու զլուխդ քարն ես տալիս, որ այսքան պատուական մարդկանց խօսքին հակառակում ես. ինչ էք ասում, սիրելիք, Յունոն էր, թէ չէ:

—Յունոն էր, Յունոն էր, ձայն ձայնի տունն բոլորեքան՝ բացի այն մէկից:

—Աղայ ջան, գողերն իրանք ասացին, թէ գնացէք, Դիւանի Դրանն ասացէք, որ Յունոն էր ձեզ թալանողը: Ճակափը ծաղիկ, փարմիր մաղնանի վրայ նստած՝ ինքն ասաց, որ ինքը Յունոն է:

— Շատ լաւ, հէնց էդպէս էլ կը պարասխանէք, ասաց օգնականը. Դէհ, հիմա վերադարձէք ձեր տները, էգուց առաւօտ կը լսէք, որ Յունօն կենդանի, կամ մեռած՝ մեր ձեռքին է:

— Հապա մեր ոչխարները:

— Ձեր ոչխարները Դուք շուտով չեք կստանաք:

— Ո՞ւրիշ:

— Էդ իմ գործս է, ասում եմ՝ կըստանաք՝ ուրիշն կըստանաք. մի առաւօտ կը զարթնիք ու կը տեսնէք, որ մի հօտ ոչխար ձեր աղաչների (փարախ) առաջին, առանց հովուի, առանց շների արածում են. կը վերցնէք, ձեր մէջ հաւասար բաժին կանէք, բայց վաճ ձեզ, եթէ մէկն ու մէկին զրկէք:

— Շնորհակալ եմք, զխիտ շուրբման, զլուս իջեցրին գիւղացիք և երեսները շրջեցին:

— Աստուած ինձ հարամ անի ուրիշի սեպհականութիւնը, ձեռքը թափ տուեց ճշմարտասօսն և չեպ շարձաւ:

— Ընչո՞ւ Դու պահանջեցիր հակառակ ճշմարտութեան վկայելու և ընչո՞ւ վիրաւորեցիր ուղիղ խօսողին, որ ինչպէս երևում էր, այդ ու բննի հօտն առած մարդ էր, հարցրի ես օգնականին:

— Այսօր մեր ուշադրութեան զլսաւոր առարկան Յունօն է, պարասխանեց օգնականը. մենք ամենայն միջոց գործ պիտի շնենք Յունօջին ձերբակալելու. այդ միայն հնարաւոր է այն ժամանակ, երբ ժողովրդի ու աւազակապետի մէջ թշնամութիւն կը մտնի, իսկ երբ ժողովուրդը մեզ օգնի, Յունօն կալանաւորուի, աշխարհն իսպառ կը խաղաղի:

Իմ և օգնականի հաշեացքներն իսպառ տարբերում էին իրարից, ես աւելի համերաշխ էի իմ նախկին ուղեկից Նադօյի հետ. վերջինիս ասութեամբ՝ ամեն մի հաւաղող, խրաքանչիւր անշնորհք խարերայ Յունօջի անուշով է սարսափ աղդում ժողովրդին:

Արեւն արդէն մայր մոնկելու մօտ էր, որ մենք ուրք Դրինք Ա. զիւլի հանդր:

— Դու քշիր, գնա, քահանայի տանն իջիր, իսկ ես զիւլի զլսավերեով պրոյտ եմ գործելու և Յունօջի տունը չանկարծակի շրջապարելու, հեշտաջեօը պարաստել տուր, մինչև ես գործս վերջացնեմ ու դամ, ասաց օգնականն և ճանապարհից շեղուեց:

Է.

Հիւրասիրութիւնը հաջ ազգի բնորոշ յատկութիւններից մինն է։ Մարդասիրական աչք բնոյթն ընդհանուր է ամբողջ Արեւելքում։ Պարսիկ, Քուրդ, կամ Մարք, Ասորիք՝ արեւելեան աշխարհի մի օրուայ ուժիչ փարբերը բոլորեքեան հիւրասիրութեամբ զերազանց են եղել արեւմտեան համազօր ազգերից։ Նախկին արեւելեան աշխարհակալների աշխմեան չքացած, կամ չքանալու շուրջ հասած յետնորդները՝ իւրեանց աննախանձելի ու անապահով վիճակի և մտաւոր ամլութեան մէջ՝ դարձեալ նոյն հիւրասէրներն են։ Իսլամական մոլեռանդ խորութիւնը՝ եթէ՝ յաջողել է մի ամուր անջըրպեփ հաստատել Մեքքայեան մարգարէի աւանդապահների և ուրիշ կրօնների հետեորդների մէջ, բայց դարձեալ իսպառ չի կարողացել չքացնել արեւելքին յատուկ հիւրասիրական գովելի յատկութիւնը։ Գալով արեւելքի փոքրիկ զաւակի՝ Հաջ ազգի այն առաւելութեանը, որ արժանացել է հանուր քրիստոնէութեան ժամանակադրական փարեզրում աւերարանի անդրանիկ աշակերպը լինելու պարունին, մենք պարզապէս կարող ենք լուծել այն հանելուկը, թէ ընչիցն է, որ հաջի մէջ հիւրասիրութիւնը կրկնապատիկ, եռապատիկ ու քառապատիկ աւելի է իւր արեւելցի դրացի, իսլամադաւան ազգերից։

Շատ հասկանալի է, հաջ ազգի հիւրասիրութեան բնածին յատկութիւնին միացել է և աւերարանի մարդասիրական վարդապետութիւնը, և հաջը՝ չընայած իւր կրած, անհամար, հոգեկան և մարմնական, անչաջող պայմաններին՝ դարձեալ մինչև այսօր եղել է հիւրասէր, կայ և կը մնայ նոյնը։ Բաւական է միայն յոռեփոխութեան և թերահաւատութեան մէջ յամառուած աշխարհուն՝ լի՛նչ ազգի, կամ ո՞ր աշխարհի զաւակ լինէր՝ միևնոյն է, զնար Հաջի աշխարհը, մի ծալրից մփնէր, միւսումը շուրջ գար և դադար կը փար այնպիսին իւր բացասական կասկածորութեանը։ Նա ի լուր աշխարհի կը հռչակէր, թէ հաջից հիւրասէր ազգ չըկայ աշխարհի երեսին։ Մնցիր հաջի շեմքը, մտիր նրա աղբարիկ յարկի ներքոյ և կը փնտնես նա իւր մի փուն լիքը գառնուկների բերանի վերջին պարտը կը կորէր և լայնասիրտ հաճութեամբ քո առաջը կը դնէր, ո՞վ Աստուծոյ հիւր։ Միայն ես ինքդ, թէ փանաւոր ընկեր-

Ներ ունիս, հեղեակ ես հիւր եկել, թէ բացի ձեր հեծած գրաստաներից՝ մի քանի ծառաներ, վարձկան բեռնակիրներ, մինչև՝ խկ պատահական ուղեկիցներ եւ ձեզ հետ էք բերել, փաստ ինչ, շուք քօլօրդ կընդունուիք ուրախ ու սրտաբաց, մեծարանքներ աւ պատիւներ կը ստանաք, և մի հարստի ձեր սողած քսակից չէք հանիլ, ձեր քսակը լիքը կը մտնէք հայի աշխարհը և լիքը շուրս կերթաք։

Հայի այս բնասութիւն և քրիստոսապետը չարկութիւններին քաջածանօթ եղբայր, ձեզ եմ հարցնում, կամո՞ղ էր չըշփոթուիլ ու չըզարմանալ, երբ իւր շիմած օջաղում իրեն սասնութեամբ ընդունելու նշովներ է նկատում, այն էլ՝ մի անձնաւորութիւնից, որի վրայ ամենամեծ պարտականութիւնը կայ՝ իւր մշտական աւանդածը նախապէս ինքը կատարելու։

Աս ինքս էի մոլորուող սասն ընդունելութիւն գտած հիւրը, Ա. գիւղի հարուստ ու բարեկեաց քահանան էր թիժու գէմք և սոհած աչքեր ինձ ցոյց տուող տան տէրը։

Հոգեւոր պաշտօնեան՝ մարմնաւոր պաշտօնէի հետ նստած էին տէրտէրի տան շիմացի ծառադարձ պարտիզում և գինի էին վաչելում, երբ ես ծռանց փողոցն անցայ և ձիուս սանձը քաշեցի քահանայի բազի յռան առաջին։

Մառաս արդէն իջել էր իւր ձիուց և մօտ վազել, պինդ բըռնել իմ ձիուս սանձն ու ասպանդակը, որ օդնի ինձ իջնելու Բայց ես չէի շարժում դեղիցս և շուարած նայում էի շէպի պարտէզ, շէպի այն երկու մարդը, որոնք կոչուած են գիւղի հոգեւոր և մարմնաւոր պետերը լինելու։ Տէրտէրին ճանաչելուց առաւել հեշտ բան չըկուց, մօրուքն ու փարաջէն իրան մտնում են, խկ տանուտէրին ճանաչելն էլ հեշտացել է այն օրից, երբ տանուտէրական շլթան կրելու օրէնքը լոյս տեսաւ։

— Օրհնեմ տէր, բարի բիկուն, տանուտէր, ձայն տուի ես թամբի վրայից, տեսնելով՝ որ նրանք երկուսն էլ կանգնել են տեղերից ու կամաց փոփոխում են։

— Աստուած օրհնեսցէ, հաղիւ լսեցի իրիցի կոկորդում խեղճուած ձայնը։

Աւ տէրտէրն աղաւաչից ոտքերը շանդալաբար շարժեց շէպի ինձ։ Տանուտէրն էլ նրան հետեց։

—Հիւր չէմք կամենալ, տէր հայր, ասացի ես:

—Հիւրն Աստուծոնն է, պարոն, համեց...

—Ձէ, տէրտէր, չի կարելի, ես չեմ թողնիլ, ես չեմ կարող, ես սիրտական լինելու միտք չունիմ, զոր ես համեցէք անում: Աղայ ջան, դարձաւ ինձ տանուտէրը, կը բաշխես, գլխիդ շուրքան, ոչ տէրտէրն էս գիշեր իրաւունք ունի իր դուռն ուրիշների համար բաց անելու և ոչ մեր գիւղումը քեզ նման պատուելի մարդին վայել սենեակ ունիւք. խնդրեմ, գնաս, վանքումն իջնես:

—Ի՞նչ վանք:

—Մենք մի վանք ունինք մեր գիւղի կողքին, մի վարդապետ էլ կայ մէջը, գնա էնտեղ իջիր. վարդապետի խուցը պտիկ է, բաց երկուսիդ տեղ կանի: Գզիր, դզիր, ձայն տուեց տանուտէրը ծառի ետեւը կանգնած գիւղացուն, որին ես չէի նկատել, շնորհ, մի տղայ կանչիր, աղային տանի հայր սուրբի մօտ, ասա՝ տանուտէրն ասում էր՝ լաւ պատիւ պուր:

—Բայց ընչի՞ համար, տանուտէր, ուրիշի տան վրայ այդպիսի իրաւունք ես գործ չնում, հարցրի գիւղապետին:

—Տէրտէրի տունն էսօր իրանը չի, աղայ ջան, պատասխանեց տանուտէրը, ես էլ, իմ գիւղն էլ, մեր տէրտէրն էլ, մեր ու՛ջ գաւառն էլ իշխանաւորինն ենք՝ երբ որ իրան պէտք է՝ ես երեկուանից հրաման ունիմ մեր օգնականից, որ տէրտէրի սենեակն իր համար պագրաստիմ և ուրիշ մարդ տուն չըթողամ. հիմի որ հրամանդդ ներս մտնես, սիրտդ կը փառաւորուի, մեր գիւղումն ինչքան կարպետ ու խալիչէք կային՝ փռուած են էնտեղ. տէրտէրի խաս խաս բարձերը հերիք չի եկել, շրկել եմ մեր գաւառի ամենահարուստ մէկը Մրտօյնեց տանիցն եմ լաւ, իստակ, նոր ու խաւս տեղաշոր բերել տուել. երկրի տէրն է, գալիս է, ես հրամանողդ ֆնց տուն թողամ: Կը բաշխես, աղայ ջան, ես չըգիտեմ՝ դու ֆիլ ես, բայց ո՞վ կուզի լինի՝ թէկուզ դու՝ թէկուզ քո ծառայի ծառան՝ ուրիշ անգամ՝ գլխիս վրայ տեղ ունի:

—Վնաս չունի, ժպտացի ես, դու, տանուտէր, պաշտօնդ կափարի, քօօգնականին պատիւ պուր, որ արդէն հետո եկու և քեց, գնաց գիւղի վերի կողմը, իսկ տէր հայրը թող ինձ յնկերակցի, իր հետ միասին գնանք ձեր վանքը. երբ դու կը տեսնես քո օգնա-

կանին, յայտնի իրան, որ այս ինչ մարդն եկաւ Կէրպէրի տանն իջնելու և ես ներս չընդունեցի, ուղարկեցի վանքը:

— Ներողութիւն, Կէր իմ, շփոթուեց Կէրպէրը, նա երբ անուս իմացաւ, մօտ վազեց, ձիուս սանձը բռնեց և ասաց.

— Խնդրեմ՝ իջնես, մեր Կենցիկներին կը շրկենք հարևանի տուն, հրամանքդ հացատանը կը հանգստանաս:

— Չէ, Կէր հայր, աւելի լաւ է, միասին գնանք ձեր վանքը. այնտեղ մի անկիւն կը գտնենք անշուշտ՝ մի զիշեր պատասպարուելու համար: Ուրեմն, հրամայեցէք, Կէրպէր, հեծնել ծառայիս ձին, թող նա ոտքով գայ, մենք քեզ հետ խօսելիքներ և գործելիքներ, ի պաշտօնէ, ունինք և շու ինձ անհրաժեշտ ես:

Տէրպէրը չը համաձայնեց ձի հեծնելը, նա ձիուս սանձը ձեռքից մի քանի րոպէ թողեց, ներս գնաց իւր տունը և շուտով շուրս եկաւ ու Դարձեալ ձեռքը ձգեց սանձին ու քայլ առ քայլ ինձ հետ միասին զրուցարեւելով՝ առաջնորդեց ինձ Դէպի վանքը:

Կէս ժամ անցած՝ մենք վանքումն էինք:

Ժանգաքն արդէն կոխել էր, անձանթ մարդի համար Դժուար էր վանքի մասին գաղափար կազմել, բայց 15 օրական բոլորակ, զիշերային լուսաւորի շնորհիւ՝ ես հիացաչ հինաւորաց մենաստանի անառիկ Դիբբի և զեղեցիկ ճարտարապետութեան վրայ: Լուսինը Դիմացից աւելի վնասալից կերպարանք էր ստիպ խոր ձորի հաստաժառ ու ապառաժոյր լանջին չկնուած, կիսաւեր սրբավայրին: Մենաստանի բարձրութիւնից տարածուած սրուերը մի զարգանդի սրբազան պապիառալից տաւորութիւն էր թողում հեռուից նայողի վրայ. կարծում էիր, թէ մի երկրորդական վանքի ուրուագիծն էր ծրագրուած քարակոյտերի մէջ, համասփիւռ թաղաւորած խորհրդաւոր լուծիւնն ընդհատում էր իմ և Կէրպէրի կամաց քափշտով և ձորի հունի միջով վազող բարակ առուակի կարկաչանով:

Մեր ձիանոնց ոտնաձայնն էր անշուշտ, որ անհանդիս էր արել վանքի սակաւաթիւ բնակիչներին: Յանկարծ՝ մի փոքրիկ շուրջ բացուեց և ձրագի լոյսի մէջ երևեցին երկու մարդկային սպուերներ:

— Յառաջ գնան, տես, ով են այսպէս տարածամ աչքերունը: Լսեցի խցի Դանից կարդալութիւն անող մի ձայն:

—Վահ, բացականչեցի ես, Թ. Տերունի վարդապետը:

—Մանօթ էք, նա ինքն է, հաստատեց տէրտէրը:

—Ի՞նչ ուրախ եմ, Աստուած օգնական Թ. հայր սուրբ, չըհամբերեցի ու ձայն տուի ես և թռայ ձիուցս:

—Հնչ, Աստուած պահապան, քո զալուստդ բարի, այն անսպասելի հիւր. շնոր, մահտեսի, քաշիր պարոնի ձին և ճուտեր բռնորիր, մեր պատուական բարեկամը քաղցած կը լինի, կարգադրեց հայր սուրբն իւր հետ եղած անձնաւորութեանը:

—Նեղութիւն մի՛ քաշիլ, հայր սուրբ, միջամտեց քահանան, հէնց հիմի ամեն բան մեր տանից կը գայ, ափսոս միայն, որ սամավար շու չունիս, մերն էս իրիկուն իմ իրաւունքից շուրս է, օգնականի համար է. իսկ քեզ յայտնի է, որ մեր գաւառումը սամավար երկու հարկ կայ. մինը մերն է՝ մէկէլը մէկիք Մրտոյնեցը: Դու էլ, հայր սուրբ ջան, մի սամավարն ի՞նչ է, որ քանի անգամ ասել եմ, չես առնում, աւելացրեց քահանան:

—Անաս չունի, պապասխանեց վարդապետը, չիտուն տարին էի մտել, որ առաջին անգամը սամավար պետայ, էսօր ես ութսուն տարեկան եմ, ուրեմն 31 տարի է՝ մեր երկիրը սամավար է մտել. ես այդ չիմար բանը չըսիրեցի. ինձ համար մի բաժակ տաք կաթն աւելի լաւ է, քան թէ ձեր միտք տան առաստաղից իջած կաթիլքաջուրը, որին շուք թէյ անունն էք տալիս:

—Միանգամայն համաձայն եմ, ասացի, հայր սուրբ ջան, մեզ թէյ պէտք է, տաք կաթն աւելի լաւ է և առողջարար, մանաւանդ՝ ինձ պէս գիւղական, անարատ կաթի կարօտ մարդու համար, որը կրկնակի գին տալով անգամ՝ չի կարողանում քաղաքում լաւ կաթը ձեռք բերել, քաղաքացիների զործածած այդ առողջարար և սննդաբու հեղուկի կէսը ջուր է ու զանազան վնասակար խառնուրդներ: Չառամեւութեան տարիներն անցրած՝ մօտ մի դարի վրայ ծիծաղող, սաղմոս ու նարեկի սիրահար հայր սուրբի հասակը թող մեզ չըլցամառեցնի ընդհանրապէս փրած, կանխակալ նախապաշարմունքների մէջ, վարդապետի ձիւնափայլ խիտ մազերի արմատներն ամրացած էին, անշուշտ, մի թարմ ուղեղի ծալքերում: Ժամանակի հետ թեւիթեւ ընթացող, ժամանակակից լուսաւոր գաղափարների տէր էր Տերունին, քաջառողջ ու կայտառ Տերունին:

ներան Կոստանդնուպոլսի ինձանից ու պակաս կը զարմանար մի այսպիսի անախրոնիզմի (ժամանակագրական վրիպակ) մասին:

Այսպիսի նպատարաւոր կարծիքն առաջին օրը չէր՝ որ ես ունեցայ մէջս. վարդապետի հետ վերջին Կոստանդնուպոլսի փոխադրութեան փոխարէն յառաջ էր՝ մի ուրիշ կիսաւեր վանքում. նոյնը Գնացի էր նախը կորովի ձայնով, իւր կրակոյ աշխարհով, իւր հակաշահուն կողմուածքով և ձեռնադրով Տասը Կարի յառաջ թերթածս նրա մարտնչականը նոյն և մի կարգաւորութեամբ փոխուել էր Ա. զիւղի վանքը՝ զրբերի քանակը կշկնակի աւելացրած. սրբոցան մարտնչներին կից՝ շարուած էին Դարակների վրայ գաւառներից ժողոված, բոբոսներից ու մկների արամներից ազգաբաժնի, հին-հին ձեռագիրները, որոնց իւրաքանչիւրի ծալքում գեղեցիկ էին բանասէր վարդապետի քննադատական հարաւորները: Ներքին Դարակներում ժամանակակից զրբերի ու պարբերական հանդէսների հաւաքածոներն էին Դասաւորուած: Աւելի բոլոր մարտնչներն ու սրբերական հրատարակութիւնները, վաղի փերսերի նման, կուլ էր փուել հաջր սուրբը:

— Լաւ, որ ծերացել ես, հաջր սուրբ, կապակարանեցի ես, ապա թէ ոչ, վրիպական զրբերի համեմունքներից ոչ մի խառնութեան վարժ ճաշակդ կը փանար և գալթակղութիւն յառաջ կը գար:

— Ոխտ ես, սիրելի բարեկամ, պարտաւորանեց վարդապետը, ակնարկածդ համեմունքը բնութեան ցնորհի նուրբ ճաշակի արդիւնքն են, իսկ այդ ամենագէտ փոքրէն՝ բնութեան արարիչը՝ ինքն է սիրեց համեմունքի անսպառ աղբիւրը. Աստուած սէր է, ասում է առաքելը, իսկ սէր շունչոյդ ունիւնէ՝ է, սէրն է, որ մէկին առաջնորդել է մարդկութեան յարաբերութեան ուղիով միւսին հաջրեանսէր ու կրօնասէր է արիւ, երբորդին սիրոյ զօր է արիւ Վասն արքայութեան Աստուծոյ և աշխարհի:

— Երբորդների ներքոյ ուրեմն թաղնուած էք և Դուք, այնպէս չէ:

— Ես միայն պարտաւորան անարժաններիցն եմ, համեմութիւն արեց վարդապետն և անձնագովութիւնից խոյս տալու նպատակաւ հարցը փոխեց:

Նոր ու շար խոսեցինք այդ երեկոյ վարդապետի հետ, փեր-

սերենց տանից եկած շատլ ընթրիքից անցանք օգնականի դորժին։

— Շատ իզուր է նեղութիւն քաշել պարոն օգնականը, շեշտեցին միասին սերտէրն ու հայր սուրբը, Յունօն հինգ օր է, տանը չի։

— Աս շատ լաւ գիտեմ, որ տանն է, սնդեցի ես, Նադօն ինձ ասաց, որ Յունօն տանն է և ընկերները հետ իր խորերն է հնձում։

— Ի՞նչ Նադօ, հարցրեց քահանան։

— Ձեր գիւղացի Նադօն, Յունօցի քուռու տղան, որ Նոր-բայտ-գիւղից սկսած՝ երեք օր հետո ուղեկից էր։

— Ո՞վ, Նադօն, ժպտաց սերտէրը խորհրդաւոր ակնարկ ձգելով վարդապետի երեսին, եթէ գիւղն իմն է, եթէ 40 դարի է իմ ժողովրդին բոլորին ես եմ մղրտել ու չափաբերականում գրել, քեզ կարող եմ հաւատարմեցնել, որ իմ ցուցակի մէջ Նադօ անուն չի մտել։

— Քո խօսքով, ուրեմն, ես սուտ եմ ասում, կամ արբանձ եմ եղել, վշտացայ ես, որ իմ երեք օրուայ ուղեկցի անունը մոռացել եմ։

— Մեղայց Սարուծոյ, պարոն, մի՛ նեղանալ, հրամանքդ չէ՞ բայց մեծութիւնիդ ճանապարհի ընկերը կարող էր Վարթօ, Դաւօ, Նաւօ, Մարօ լինիլ և քո առաջին Նադօ ձեռնար։

— Դրա շէմ խօսք չունիմ, բայց ի՞նչ կարիք ունէր մարդը մի անծանօթի մօտ անունը փոխելու։

— Մարդ չէ՞նք, օրհնուած, մարդիս միտքն անտակ ծով է։ Էնպէս չի, հայր սուրբ, չէր կարող մի Սհօ, մի Մկօ, մի Աւօ անունը փոխել, Նադօ շատնալ։

— Այդպէս էլ եղել է, բազէն սեղեկութիւն է ունեցել Դարանած թակարթի համար և հետեւելով որսորդին ուրիշ անուան պակ՝ հետքը ծածկել է, բայց խեղճը չի իմացել, թէ աքաղաղի պոչն երևում է փէշի տակից։

— Թրանի թրուսի, հրացանների ճարճատումներ աղմկեցին շրջակայքը, աղմուկ դռում—դռում արձագանք էին տալիս ձորի ժայռերին և շիպչում մեր ականջին։ Հետզհետէ ձայները պարզւում են, կանանց ու երեխաների ձայն ու ծղրիտոց, լաց ու վայնասուն, անէծք ու հայհոյանք իրար խառնուած պարզ մթնոլորտի մէջ՝ որոշակի լսւում էին ոչ հեռուից։

— Էսպեղ են դալիս, հայր սուրբ, նկատեց և յայտնեց քահանան ու աւերացրեց։

—Իրանց մի հարցնող լինի, թէ, վարդապետն իր համար շատ քիչ ունի, որ շուք էլ՝ ձեր փները թողած՝ հաւաքուամ էք զլիսին:

—Ի՞նչ, անեն խղճուկ մոլորուածները, կարծել են, թէ զիւշն աւեր են տալիս, թողել են փախել մեզ մօտ. վանքերը նոր հօ չեն նեղեալների ու հալածեալների ապաստանարան, կարեկցեց վարդապետը, մեր վանքերից շատերն այդ իսկ նպատակով էլ շինուել են, վանքերի ամուր, եօթը տակ սյարիսպները զաւառներ են պաշտպանել իրանց ներսի կողմը, հապա էլ ի՞նչ է մեր վարդապետներին նշանակութիւնը, եթէ ժողովրդի նեղութեան օրերում նրանց կարիքին չըհասնենք:

—Բայց չէ որ այսօր էդ կորիքը չի զգացում, ընդդիմաբանեց քահանան, վարչութիւն է, իր աշխարհն անհանգիստ անողի եպիսկոպէս է ընկել, ուզում է բռնել, խաշալ գիւշացիք ընչի՞ պիտի փները ձգեն, իրանց շուքերը կրնի վրայ բաց թողան ու յօջաները մի աւերակ անշուռն ու անսպասելի վանքի, մի ծերունի խեղճ վարդապետի վրայ շինել: Էս բոլորը՝ լրջօքնեց Հոռոմի արարքներն են, անսիրտան պառաւ ձայնը պարզ լսում է, երևի օգնականը չըջապատած է եղել իրանց թաղը ու նա էլ իրաւունք է խնդրել օգնականից, տաանից աւել գերշատան ետեւը գցել ու բերում վանքը:

—Հնչր սուրբ ջան, կարգիդ մեռնիմ, օգնիր, զիւշն արիւնը տարաւ, ծիւ արձակելով չօքնեց իւր հետ եղողներով մի պառաւ, վնջ զլիսիս, մեր թաղը մօխիր կտրուեց, մի մտիկ տուէք, ձեր ոտներին շուրքան, անտու՛ն, անտեղ մնացինք:

Պառաւ Հոռոմն ամենից շուր էր նկատել, երկինքն ամբողջ շառագունել էր, կրակի բոցերն ու ամպամած ծուխն իրար տեղի տալով, կամ միմեանցից առաջկտրուել անելով՝ չքանում են օդի մէջ:

—Անպատճառ տանն է եղել Յունօն, չի ուզեցիլ անձնատուր լինիլ՝ և օգնականը տու՛նը կրակ է տուել, ենթադրեց տէրտէրը:

—Հնչր սուրբ ջան, ի՞նչ պիտի լինի մեր ճարը, հարիւր խմակներն հիմի խորովածի պէս ճութճութում են կրակի մէջ, էս ի՞նչ ցատում էր, որքո՛ւ Աստուած, կտրանամ ու խաւարիմ ես, քնց չկարողացայ ճարը կտրած աղջկանս ու թոռներիս էլ վերցնել:

— Ոչինչ, ոչինչ, Հոռոմ մայրիկ, վեր կաց, Աստուած ողորմած է, Աստուած անտէրների տէրն ու օգնականն է, մխիթարում էր վարդապետը:

— Միացն Յունօյի տունն է, հասկացաւ տէրտէրը, գիւշին փնաս չի շիպել, մտիկ տուէք, կրակը նստում է, երեսում է՝ Յունօն չի ուզեցել բնից շուրս գալ, կրակել են տունը:

Վարդապետը հրամայեց իւր ծառային տանել տեղաւորել դիւղից եկողներին:

Վերջապէս քիչ քիչ հրացանների ձայները շաշարեցին, հրդեհն սկսեց նուազիլ, աղմուկը հանդարտեց:

Մինչ վարդապետի հրամանով նրա ծառան սպասարարում էր գնալ լուր բերելու, ինքն օգնականն երեք չորս ձիաւորով եկաւ և վանքի քակումն իջաւ:

— Հը՛, շտապեցի հարց տալ ես:

— Է՛հ, զուր ջանք և անօգուտ վաստակ, անիծածը հողեղէն չի, սատանայ է, աւագի հոտիկի նման չքացաւ աչքներիցս, զուր տեղը խեղճ դիւղացիներին անհանգիստ արինք. լիմար ու անհասկացող մարդիկ են, որքան հաւատացրի, թէ ձեզ փնաս չի շիպիլ, չեղաւ, մանաւանդ կանայքն ու երեխայքը՝ տները թողին, շաշարի երեսն ընկան:

— Տները կրակեցի:

— Միացն Յունօյի տունն էի ուզում կրակել, որ մեզանից խելօք շուրս եկաւ, խոստայաւ անձնատուր լինելու:

— Ուրեմն դիւղին ոչինչ փնաս չեղաւ:

— Մի՛թէ ես թոյլ կը տայի:

— Պատմիր տեսնենք:

— Ժամանակ չես տալ քիչ հանգստանալ. պատասխանեց օգնականը, գնացի տէրտէրի տունը, կարծեցի հեշտացեւը պատրաստ կունենաս, որ մի բաժակ թէյով չորացած կոկորշս փափկացնեմ. ասացին՝ որ վանքն ես եկել. ես էլ ամենեւին չիջայ, ուղղակի քշեցի այս կողմը: Աստուած օգնական, հայր սոբբբ, հիւր չէք կամենում. Դարձաւ օգնականը վարդապետին և առանց նրա հաճութիւնն առնելու՝ մտաւ խուցը:

Ը.

— Ինչպէս երեւում է, Յունօյին նախազգուշացրած են եղել, մի բաժակ տաք կաթը խմելուց յետոյ՝ սկսաւ իւր պատմութիւնն օգնականը: Շրջապատում եմ տունը, կարծելով՝ թէ ինքն էլ, իւր ընտանիքն էլ ներսն են. մէջս ուրախ էի ու այնքան իրան ձերբակալելու, որքան նրա, հուրի մալաք, գեղեցկուհի կնոջը տեսնելու համար, ասում են, որ շատ սիրուն է:

— Յունօ, իմ հրամանով՝ փակուած դրան առաջից ձայն է տալիս գիւղական տանուտէրը, աշայ օգնականը հրամայում է՝ Դուրս գաս, իր սրբերն ընկնիս, թէ չէ՝ դունդ գլխիդ կը քանդի:

— Ձեզ շուրբան, զնացէք, հեռացէք, լսում է ներսից մի բարակ կանացի ձայն, սրիդ մեանիմ, կնքաւոր, կը բաշխես՝ որ սանամէրդ իր պապանձուելու լեզուն ասջեդ պորտում է¹, ինչ անեմ, նեղն եմ ընկել, էն կանաւ մեռունը կը սիրես, որ իմ տունն ես բերել, աշայանք արա օգնական աշային, որ մեզ հանգիստ թողնի, Յունօն հինդ օր է տուն չի եկել, ես եմ ու քո սաներդ:

— Դու ո՞վ ես, ա՛յ կին, ձայն եմ տալիս ես:

— Սոնամէրս է, աշայ, Յունօյի ընտանին, պատասխանում է ինձ տանուտէրը, ծառայ Յունօյի կնքաւորն եմ, թագն էլ ես եմ բռնել, երեխէքն էլ ես եմ դրկել:

— Դու Գիւլօն ես, ո՛չք չըդարձրած տանուտէրի մանրամասն բացատրութեանը՝ հարցնում եմ ինքս Յունօյի կնոջը:

— Հրամանք, աշայ, Յունօյի ընտանին եմ:

— Մարդիդ ասա, իմէ քեզ սիրում է, թող Դու ուր բաց անի, Դուրս գա, իր չօժար կամքովը բռնուի, թէ չէ՝ հերոս հարիւր ձիաուոր ունիմ, կը հրամայեմ՝ երթիկից ու բանալու ծակից քեզ էլ, երեխէքանցդ էլ զնդալահար կանեն, սպառնում եմ ես:

— Ձեզ ասում եմ, որ Յունօն էտրեղ չէ, լսում է ներսից նոյն կանացի նուազ ձայնը:

— Ընչի՞ սուտ կասես, կնիկ, զոչում է յանկարծ ներսից Յու-

¹ Հայկական հին սովորութեամբ՝ սանամալը ոչ միայն իրաւունք չունի իւր կնքաւոր հետ խօսելու, կնքաւոր չուաքն անգամ տեսնելը մասհացու լանցանք է:

Կօն, հատար կողքիդ եւ չեմ կանգնած: Մէկ չէ, եւ չըդուրս դամ՝
իմ գիւլէն (գնդակը) շուրս գայ:

— Եւ թէ՛ էք կարծում, հայր սուրբ, քարմացած պատմում
էր օգնականը, շրան սողնակից (բանալու տեղը) քրաքեց առաջին
հրացանը եւ գնդակը վայր ընկաւ ճիշդ ոտքիս մօտ:

— Աշայ, ձայն Կոնեց ներսից Յունօն, խելք ունիս՝ փորձանքդ
քաշիր, հեռացիր, հօ տեսար, ուղէի՝ կապանէի, բայց կնոջ ու երե-
խեքանց տէր ես, խելճ եկայ, դիւլլէս ոտքիդ առաջին՝ դեմնումը
թաղեցի: Թէ չես հաւատում, ահա երկրորդ գիւլլէս էլ ձիւդ
ականջը կը ծակի, պինդ նստի թամբի մէջ, աշայ, եկաւ հա: Անի-
ծածը սուտ չէր ասում, ձիւ երկու ոտքի վրայ ծուլ ծուլ եղաւ,
քիչ մնաց՝ ինձ վայր էր դրում՝ երբ խելճ անասունն զգաց Կոնեց
գնդակի հարուածն իր փոքրիկ ականջին:

— Արձակեցէք հրացաններդ, կարգադրեցի ես:

Ջիւաւորներն գնդակները կարկտի պէս շիւղում են Յունօյի
փակ շրանը:

— Սողնակի ծակին աչքեցէք, հրաման Կոնե:

— Վայ գլխիս, գիւլլէն երեխիս շիւղաւ, ճիշ արձակեց ներսից
Յունօյի կինը:

Կնոջ աղէխարշ լացը, մանուկների ճէոց դռռոցը սիրտս ցա-
ւեցրին, բայց ես ապափներս սեղմեցի եւ գոչեցի:

— Անիբաւ Յունօ՛, չեմ խնայում կնոջդ ու երեխաներիդ, ըն-
չիմ չես անձնատուր լինում:

— Երկու երեխայ են, աղայ օգնական, պապասխան Կոնեց
աւաղակը ներսից, քո ցաւը տանին, իմ հոգսը կնիկս է, խնդրում
եմ, երբ ինձ ճանգելուց յետոյ՝ սրան էլ կը բռնես՝ փար քո Կոնը,
Խանուալիդ առաջին ղարաւաշ (աղխարն) պահիր, ու էնպէս արա,
որ նամուսը Կոնը մնայ:

— Եթէ այդպէս է, ասում եմ, շուրս արի:

— Էնպէս խօսք ես ասում, աղայ յգնական, սկսեց ծաղրել ինձ
ներսից ձեր Յունօն, որ խաշած հաւի ծիծաղը կը դայ. հէր օրհնած,
եւ, որ ուզենամ շուրս դալ, շու ուրախ չըպիտի լինիս. ախար,
նեղութիւն եւ քաշել, եկել ես, հրամայի էդ կորիճ ձիւաւորներիդ
Կոնես քանդին, ներս մտնեն, իրանց ձեռովը կռնիս քամակիցս կա-

սեն, բերեն առաջիւի բերանքս ի վեր շարսեն, յաւ էլ կաց ու փառաւորուիր: Զէ, աշայ օգնական, խելօքութիւն չես անում, էսօր որ ինձ բռնես, էգուց քո քաջութիւնիդ համար պաշտօնդ կը բարձրացնեն: Հանաքն էն կողմը, օգնական, շարունակեց Յունօն, գիլի աւերարաններդ ականջս չեն մորում, 100 ձիաւոր չէ, որ 1000 էլ ռեննաս, ես քեզանից երկիւղ չունիմ: Քեզ կորական ասում եմ, որ մինչև ինձ կենդանի, կամ մեռած՝ իմ տանից ուժով յուրս չըհանես, ես իմ յուսը յօժարութիւնով առաջիւի բաց անողը չեմ, զուր ոչ խօսքդ խարջիր, ոչ պատիւդ կորցրու:

— Բարձրացէք կրուրը, հրամայեցի ես և երթկից՝ հասած ծիրաններին նման գնդակներ շաղ տուէք զրա քունջ ու պուճախը, մի՛ խնայէք ոչ իրան, ոչ ընտանիքին: Բռնորովին զուր. մթութեան մէջը իմ ձիաւորներին գնդակները փշանում էին, իսկ Յունօն հէնց իմանաս՝ կարու լինէր, որ գիշերը տեսնում է. — գնաց շաղախիդ ձին, զոչում էր առաջ, և հրացանն արձակում ու ձի սպանում. — կորուսեց կողքիդ կանգնողի ոտքը, ձայն տուեց նա ու խօսքը չըվերջացրած՝ խնդ ձիաւորներինց մէկի ծնկան խուփը փշրեց, — թռաւ աջակողմիդ չափարի մօթալ փափախը (ոչխարենի գլխարկ) զուաց նա՝ և գնդակը ծակեց որոշած մարդի գլխարկն ու անցաւ:

— Վերջին անգամը քեզ հասկացնում ու մեղքս ինձանից թափ եմ տալիս, օգնական, ու քո վիզդ եմ փաթաթում, զուաց Յունօն, խեղճ արի քո մարդկանցը, ասա թուանքները տեղը դնեն, ինչ են արել ողորմելիքը, ընչի՛ ես մարդկանց արիւնի տակը մորում, մայր կուեննան, քոյր, կին ու երեխէք կուեննան, ամէնքը քեզ կանխեն, որ տարար իրանց սիրեկանին կեանքից զրկեցիր: Աշաշանքս ան, օգնական աշայ, քաջուիր, հեռացիր, ինձ էլ խեղճ արի, հերիք է՝ ինչքան արիւն եմ թափել:

— Եթէ էդպէս է, ասում եմ, յուրս արի, անձնատուր ելիր:

— Խօսքս խօսք է, աշայ, անողը չեմ, ինչ կարող ես՝ մի՛ խնայիլ, ասաց Յունօն ու լռեց:

— Տղայք, հրամայեցի ես, շուրով քանդեցէք հարեաններին կորներում շէղ զրած խորերը, շարեցէք էս անիծածի տան շուրջը, նաւթ շաղ տուէք վրան և կրակ տուէք, թող ինքն էլ, իր սիրուն ինն էլ, իր երեխէքն էլ մոխիր շառնան ու աշխարհքը հանգստանայ:

Նորից Յունոյի կնոջ ու երեխաների ճշոցն ու ծղրտոցն երկինքը բարձրացաւ:

— Դուրս գնա, Յունո ջան, թէ երեխաներիդ արեւը կը սիրես, լսեում էր ներսից կնոջ աղաչանքը:

— Անկարելի է, պատասխանում էր Յունոն:

— Եթէ անմեղ զառնուկներիդ չես խղճում, իմ սիրու համար Դուրս գնա, գլուխդ զննանք կոխիր, կրկնում էր կինը:

— Որտեղ ես՝ էտեղ էլ Դու, Գլու ջան, էտեղ էլ իմ սիրուն ձագուկներս, թող էս տունը մեր գերեզմանը Դառնայ, Դու չեղած՝ ես ընչի՞ ապրեմ, ես չեղած՝ երեխէքիս ո՞վ տէրութիւն անի. մեր արիւնը օգնականին եմ բաշխել, ասաց Յունոն:

— Քարասիրտ գազան, զոռացի ես Դրսից, աշուհներե ես անպարս՝ Դու պարտական, տունդ կրակ եմ տալիս: Տղայք, հրաման արձակեցի ես, վառեցէք:

Նոր էին սկսել մեր մարդիկը մի երկու տեղից կրակ տուել հեռու թափած խոտերը, որոնք ես Դիմամբ Դարսել էի տուել, որ Յունոն ներսից ձայն տուեց.

— Խօսքս չիտ եմ առնում, օղնական աղայ, իմ մեղքն էն մարդի վրիզը, որ առաջին անգամն ինձ արենպարտ դառաւ:

— Ուրեմն, նախ՝ Դուրս թափիր սողնակի ծակից բոլոր գէնքերդ, ձայն տուի ես, յետոյ՝ Դուռդ բաց արա՛, առանց գէնքի անձնատուր եղիր:

Ասածս կատարեց Յունոն. միմեանց ետեից՝ չորս ասրճանակ և երկու հրացան սողնակի ծակովը նա Դուրս շարտեց:

— Տղայք, հրաման տուի իմ մարդկանցը, շուրջ բոլորեցէք, բոլորապոյտը նեղացրէք ու եթէ տեսնիք, որ միտք ունի փախչելու, խփոյն բռնեցէք, կամ հարիւր գնդակ միանդամից վրան շաշ տուէք:

Սրդարեւ, Դուռը բացուեց և Դուրս եկաւ Յունոն գլուխը կախ՝ ու մօտ եկաւ ինձ:

— Հինգ քաջ հազիւ էր մնացել, չանկարծ ծոցից՝ թէ սրտեղից՝ մի ընկօլվնը երեաց ձեռքին. մէկ, երկու, երեք, արաք, արաք, արաք՝ և ոչ միայն ես, բոլոր իմ ձիաւորներս շփոթուեցան, թևերով աչքները բռնեցին, ինչպէս մի վախկոտ երեխայ, որ ընկերի աստիճան իրան չը գիտէր և համար՝ անձնապաշտպանութեան այդ

միջոցն է գործ շնուամ Յեպ ու յեպ քաշուեցին իմ ձիաւորներն ու էն սապանին ճանապարհ տուին. սապանայ չէր՝ հասպա ինչ էր, երեակալեցէք՝ մի փոքրիկ փեփուր՝ տասպիկ քամաւ առաջն ընկած: Էլ հետքը կերեալ: Քէ ինչպէս արագութեամբ կատարեց Յունոն աչա գործը, խօսք չեմ գտնում պատմելու: Այսքանը միայն լսեցի.

— Օգնական աշակ, որտեղ քոնը պատմես, իմ էլ հետն տան:

— Այս անգամ էլ ձեռքիցս ազատուցիր, ճարահարեալ դռեցի ետից, բայց եթէ այնպէս չանեմ, որ չօքէ չօք գաս, ոտքերս ընկնես, իմ անունս թող դաւառի տիրոջ օգնական չըլինի. կնոջդ ու երեխաներիդ բանտումը կըմթացնեմ. աչն ժամանակն՝ եթէ մարդ ես, արի, սիրուն Գիւլօջիդ կորցրած նամուսը տեղը բեր:

— Կամաց, գողդ լացն պահիր, աշայ օգնականն, ծաղրեց ինձ անիրաւն ու կաթիլ ջուր շտաւ, խառնուեց Սեանայ ծովի հետ: Հիմի թէ մարդ ես, գնա դպիր, վիզը ծռած՝ խոտալանեց իւր պարտութիւնն օգնականն և աւելացրեց.

— Ի՞նչ էք կարծում, հայր սուրբ, աղեցինք, մաղեցինք, բունջ ու պուճալս քշքրեցինք, տանը տեղ չըթողինք՝ հարիւր անգամ տակն ու վրայ արինք, միան ծակերն էլ բրեցինք ու փորեցինք՝ չըկան, չըկան, չըկան ոչ ինքը, ոչ կինը և ոչ երեխայքը: Էլ չը գիտեմ՝ փէշի տակին էր թագցրել նրանց, թէ գետինն էր ճղել, մէջը պահել:

Շատ որ հոգեհան եղանք, տանջուեցինք ու ձեռնուեալն մնացինք, հրաման տուի իմ մարդկանցը, որ տանուտէրի հետ ողջ գիւղը խուզարկեն, գոնէ ընտանիքին բռնէինք մի քանի օրով: Ինքս էլ լսելով՝ Դարցաւ ինձ օգնականը, որ շու թողել ես տէրտէրի տունն ու վանքն եկել, չըգնացի քահանայի սենեակը, ուղղակի քչեցի աչատեղ, Ստոծով՝ քիչ ժամանակից լուր կունենանք, որ կինն ու երեխայքը ձեռք են ընկել:

— Յունօջի կողմից՝ ձեռքերդ միանգամայն լուացէք, պարոն օգնական, մէջ մտաւ քահանան, թռչունը վանդակից թռել է, էլ չի բռնուիլ, իսկ կնոջն ու երեխաներին բռնելու համար՝ զուր ես խեղճ զիւղացիներին անհանգիստ անել տուել, մի շարաթից աւելի է, որ Յունօջի կինն ու երեխաները Նոր-Մայաղիդ հլււր են գնացել իրենց, չըգիտեմ, ինչ ազդականի տունը:

—Ի՞նչ ես ասում, տէր հայր, եթէ իմ ականջներս խուլ լինէին, հարիւրից շատ մարդ կար այնտեղ, բոլորը կը վկայեն, որ Յունօյի կինն ու երեսօյքը տանն էին, ես պատմեցի, որ ինքս եմ գրտից հետը խօսել, պատասխան առել, աշխարհքն է լսել կնոջ ու երեսօնների լաց ու շիւտանք:

—Ե՛ւ ձեր ականջներն են սուր եղել, պարոն օգնական և՛ ձեր հետ եղողներինը, բայց թէ Դուք, թէ ձեր մարդիկը՝ բոլորդ էլ սխալուած էք. ձեզ Դեռ ներելի է, անծանօթ մարդիկ էիք, բանն էն է, որ մեր անասուն տանուպէրն էլ մոլորուել է. այնտեղ կին, երեսօք, Յունօ, բոլորը մի զլուխ էին, միայն մի մարդ էր ձեզ հետ խօսողը, Յունօն ինքն էր Գիւլօ Դաւանում, աղաչանք անում, նա էր երեսօյի պէս լալիս, նա էր ձեր հետ պայմաններ անում:

—Միթէ:

—Այո, պարոն օգնական, ես ես վկայում եմ, որ տէր հայրն ուղիղ է ասում, միջամտեց վարդապետը:

—Ա՛յ տէրտէր, էդպէս բան չի կարող լինիլ, Դարձեալ թերահաւատօրէն երկմտում էր օգնականը:

—Կարգովս եմ երդում, աղայ, Յունօն էդ շնորհքի տէրն է, հարիւր մարդ հետը խօսի, հարիւրին իրանց ձէնովը պատասխան կը տա:

—Ուրեմն ի՞նչ անենք, ուսերը վեր քաշեց օգնականը:

—Է՛ն արէք, աղայ, որ խեղճ արի ի՛մ ժողովրդին, էս բոպէին՝ հետիւտ ձիաւորներից մէկին ուղարկիր ու հրամայիր, որ իմ ժողովրդիս տները չըմտեն, հանգիստ թողնեն:

Քահանային ձայնակցեցինք ներկայ եղողներս:

Մեր խնդրանք՝ Ա. գիւղն ազատուեց խուզարկութիւնից:

Օգնականը մի թեթեւ ընթրիք արեց վարդապետի մօտ ու նոյն գիշերը վերադարձաւ իւր պաշտօնատեղին:

Թ.

Արդէն ասուած է, որ ինձ վիճակուած էր Գեղարքունի գաւառի այցելութիւնս վերջացնելից յետոյ՝ շրջան կապարել Սիւնեաց աշխարհում:

Այդ ճանապարհորդութիւնը, արդէն ասել եմ, որ անելու էի Վայոց ձորով: Իսկ Վայոց ձորը մոտ քործելու էի ես Վերին Ղաւառանլուի գիւղով:

Ես մի մեծ շեղումն արի՛ Մենք գիտենք, որ Բասարգէշար գիւղը, որ նոյն է՝ նախկին Վասակաշէն աւանը, Նոր-Բայազիդի գաւառի վերջին հայաբնակ գիւղն է։

Աւարտել եմ այնպիսի գործս և լուսադէմին շուրս եկել ծառայիս հետ թեքուել շէպի արեմուտք, վերադառնում ենք մեր եկած ճանապարհով շէպի Ղարանլուի գիւղը։

—Այս գիշեր մնալու ենք Ա. գիւղի վանքումն, ասացի ծառայիս, վարդապետին խօսք եմ փուել, որ վերադարձին մի գիշեր իւր մօտ մնամ։

—Վանքումը քնելու տեղ էլ չըկայ, ծառաս պատասխանեց տհաժութեամբ, տէրտէրի տունն աւելի լաւ է, խոտ ու քարման շատ ունի, ես իմ ձիուն...

—Բարո՛վ, աղայ ջան, հնց ես, գլխիդ շուրքան, հնչեց ետեւից՝ ականջիս տակ մի ծանօթ ձայն։

Սիրտս թռնդ ելաւ, մազերս քստմեցին, ծառայիս խօսքը նմանապէս շրթունքների մէջ սառեց, երբ խնայն մեր առաջն անցաւ ողջոյն տուողը և գլուխը հանեց, պատկառանքով երկրպագեց ինձ։

—Օ՛հ, բարեւ Նաշօ, այս ռիտեղից, երկիւղս զսպելով՝ հարց տուի նախկին ուղեկցիս։

—Դիմացի սարիցն եմ գալիս, աղայ ջան, մեր պաւարի մի մասն էլ էս կողմերումն է, գնացել էի տեսնելու, պատասխանեց լրջութեամբ բարեկամս։

—Ուրեմն լաւ եղաւ, մինչև ձեր գիւղը միասին ճանապարհորդ ենք։

—Բայց, աղայ ջան, ինչքան միտքս է, հրամանքդ անցեալ օրն ասացիր, թէ գնալու ես Տաթև, միտքդ փոխեցիր՝ ինչ է։

—Դարձեալ գնալու եմ։ Էս գիշեր ձեր վանքումը վարդապետին հիւր կը մնամ ու կողոց վերին Ղարանլուի գիւղից կանցնեմ Դարալագեազ։

—Մէկ էլ ընչի՞ ճանապարհդ երկարացնես. թէ կը կամենաս՝ էսօր մինչև իրիկնասպահ ես հրամանոցդ կը հանեմ Դարալագեազի վերջին գիւղը, որտեղից մինչև Ձանգեազուրի հողը մի գիւլի մանգաղի է (տարածութիւն)։

—Իսկ վերին Ղարանլուի գիւղով։

—Ղարանլուսից մինչև իմ ասած տեղն երեք չորս օրում
շփուար հասնես, վճռաբար ասաց Նադօն:

—Բայց Խնչպիսի ճանապարհ է, Նադօ, երկիւղալի չէ քո
ասած կողմերով գնալը:

—Երկիւղն ինչ է, աղայ ջան, ոսկին տեփուրի (փայտեայ բո-
լորշի սկուտղ) մէջ լցրու, գլխիդ դիր, արձակ համարձակ ճանա-
պարհդ բռնի, գնա, ոչով ասող չի լինիլ, թէ աչքիդ վերեն յօնք
կայ:

—Հանգիստ ճանապարհ է:

—Թէ որ մի երկու ժամ քարքարոտներին չես կարող դիմանալ,
աղայ ջան, լաւն էն է՝ մրքումդ դրած ճանապարհը բռնես, գնաս:
Ասենք՝ ողջ Ռարալագեազի գաւառն էլ շատ քո հաւանած ճանա-
պարհներ չունի, բայց, ինչքան լինի՝ իմ ասած տեղերից հանգիստ
է: Մի երկու ձոր ու սարեր կան, ուզես չուզես՝ ձիուցդ պիտի իջ-
նես, քաշելով գնաս: Մեր Յունօն էլ էն տեղերումը լայաղ է անում
(բարեհաճում է), ձիուց ցած է դալիս:

—Հինգ ժամ, վեց ժամ, ամսը ժամ, հարց տուի ես:

—Ոչ էլ՝ թէ երեք չորս ժամ, աղայ ջան, մի երկու դարիդու
դարիվէրը չըլնէին, ձորի էս գլխից ձէն դալին, էն գլխից պատաս-
խան կը ստանային: Դէ, սարի ճանապարհ է՝ ինչ որ սարերին կը
սազի, սէլեր հօ՛ւ չըպիտի անցկենային:

—Ուրեմն, եթէ քեզ նեղութիւն չի լինիլ, առաջ անցիր,
ասացի Նադօյին և ձիուս զլուխը դէպի արևելք թեքեցի ու ծա-
ռայիս հետ հետևեցի հաւատարիմ ուղեկցիս:

ձիւդ տասն և մէկ ժամն էր, երբ Նադօն իւր ձիու սանձը ձգեց,
դարձաւ ինձ ու ասաց.

—Աղայ ջան, էս ոլորանը որ անց կենանք, կը մտնենք մի խոր
ձոր, որտեղ ոչ խոտ կայ, ոչ ջուր. լաւ չի՛ լինիլ, որ էս փռչակի-
(պուրակ) ալբրի ափին իջնենք, ձիանքը թողնենք՝ արածեն, կըշ-
տանան, մենք էլ մի քիչ արամներիս տակը բան դնենք, ջաղաց-
ներս դործի քցենք, հանգստանանք, յետոյ մտնենք ձորը:

—Իջնելն իջնենք, Նադօ՛, ասացի, բայց բնաշուն չըկայ, որ
ջրաղացներ բանացնենք, քաղցած փորով պիտի գլուխներս դնենք
քարին, քնենք, որ ստամոքսներիս խաբենք, ես չըգիտէի, թէ մենք

անմարդաբնակ տեղերով ենք անցկենալու՝ նախաճաշիկի պատրաստութիւն չը գտեսալ:

—Հրամանացդ ծառան, աղայ ջան, առանց պատրաստութիւնի տանիցը չեմ շուրս գալիս, ես էլ որ չուզենամ հեպտ պաշար վերցնելու, մեր ընտանին ինձանից թաքուն Աստու պուածից ինձ համար բաժին պիտի հանի:

Եւ Նաշօն իջաւ ուրապոյտը ձորաբերանին, ինձ էլ իջեցրեց ու ձիանոնց սանձերը հանելուց ու կանաչ խոտումը կապելուց յետոյ, վերցրեց իւր ձիու թամբից ճանապարհորդական պաշուստկն ու ետփունջին: Նա ետփունջին փուեց տակիս ու խուրջիկի կապը յետ բացեց:

Ամէն բան մոռացայ, երբ սպիտակ, լաւաշ հացերի մէջ փութած թաթած խաշած հաւերը, խորոված իշխանաձուկը, ոչխարի պատուական սառը խաշլիւմն, չում ու կարագը, պանիրն և մի շիշ գինին տարածուեցին առաջիս:

—Սուփրէն քցած՝ բանն անիծած, ասացի չաչփնի առածը և համեցէքի չըսպասած՝ ծուարեցի հաւի փափուկ կուրծքն և հարցրի:

—Խուրջիկիդ միւս հակումն ինչ ես պահում, Նաշօ:

—Ես սարի մարդ եմ, աղայ ջան, շաբաթներով չոլերումն եմ լինում, օրապոս, շաբթապոս է գալիս, հայ—քրիստոնեայ ենք, քաղցած հօ չիտիտի մեանք, խուրջիկիս մէկէլ կոշմումը պատուայ պաշարն է:

—Ա՛յ աղայ, դաշտերում մանեկոյի համար պաս ուրիսս ո՞րն է, կեր՝ ինչ որ ձեռքդ է ընկնում, պեսնող չըկայ, Նաշօյին փորձելու համար՝ զարթնացրի այս խնդիրը:

—Առաջինն, աղայ ջան, մի աչք կայ, որ գետնի տակին էլ թէ թագիկեանք, մեզ տեսնում է, էդ մեր սրեղծողի աչքն է, նրան խարել չի լինիլ, մարդ խաբելուց էլ շահմունք չըկայ, երկրորդը՝ որ ձեր պէս գիտուն աշաներն են պաս ուրիսի նշանակութիւնը հասկանում, սրտներն ուզած ժամանակը՝ նախնեաց զիրքը քանդում են. բայց մենք որ կանք, խեղճ, անհասկաղող հայ—քրիստոնեայ ենք, մեր պապերի գնացած ճանապարհից որ ծուռեցինք, 4ը մոլորուենք, շփոթի բաժին կը լինինք:

—Յունօն պաս ուրում է, Նաշօ, չանկարժ հարց տուի ես:

Նադօն սարսափահար եղաւ անսպասելի հարցիցը, նա մի րոպէ շփոթուեց, բայց շուտ ուշքի եկաւ և ասաց.

— Ինչքան ինձ յայտնի է, Յունօն իր կեանքումը պասը խախտած չի, բայց, աղաց ջան, էս ամալի անապատումը Յունօյի անուընդ որդեղից միտքէ եկաւ, նրա անուընդ ընչի՞ չիշեցիր:

— Նրա համար, որ ես գիտեմ՝ որ կան մարդիկ, որոնք մարդ կը սպանեն ու պաս չեն ուտիլ. բանից շուրս է գալիս, որ քո գոված Յունօն էլ նրանցից մինն է, անմեղ մարդկանց հաւի պէս կը մորթի՝ մեղք չի համարիլ, չորեքշաբթին քանդելը մահացու մեղք կը կարծի:

— Մէկ՝ աղաց ջան, որ մարդիս սիրտը քննելը մեր բանը չէ, քննողն ինքը սխալների մէջ կը թաղուի, կը մոլորուի, մէկ էլ՝ որ Յունօյի համար ես մի քանի օր յառաջ արդ արի, թէ նա անմեղ արիւն չի թափել. Յունօյին որ հարցնենք՝ ինքն իր Աստու առաջ պարգերես է: Եւ թողնենք, աղաց ջան՝ է՞ն իր ոտիցը կախ կը փան, ոչխարն իր ոտիցը, Յունօյի դարդը մեզ չեն փութել, դու հացդ անուշ արա ու պառկի էս քարափի հովումը, մի քիչ հանգստացիր, շեռ բաւականին ճանապարհ կայ կտրելու:

Ես պատրուակուեցի, իբր թէ չեմ հասկանում Նադօյի յանդիմանական նկատողութիւններն և շարունակեցի.

— Ուրեմն և չըվախենայի Յունօյից, եթէ յանկարծ դար ու քո կանգնած տեղը ձեռքը ձգէր սրի դաստակին ու աւքերը չորս կողմը ման ածէր, ինչ որ հիմա դու ես արել:

— Եւ կը նշանակէր, որ Յունօն իր սիրած մարդի գլխավերեւը դարաւուրով թիւն է անում, որ չըլինի, թէ էս երկիւղալի տեղումը, յանկարծ՝ ձորիցն աւաղակները շուրս գան ու կամենան մօտենալ: Բայց, աղաց ջան, հերիք է, սրտիցդ կատաճները հանի ու հացդ վաշելի, Յունօյի սաչիցը՝ (ի շնորհս Յունօյի)՝ քո հափ մագին խէթ աւքով մորիկ փուռ չի լինիլ, ամենքը գիտեն, որ ես Յունօյի քեռու փղէն եմ և չեն համարձակուիլ մորքներովը շարութիւն անց կացնել:

— Եթէ այդպէս է, եկէք շուրս էլ, Միքայէլն էլ (Միքայէլն իմ ճառան էր) նստեցէք, հաց կերէք, երկուսդ էլ հիմի անպատճառ ձեր սրտումն ինձ հայհոյում և մեղադրում էք, թէ լաւ մարդ, փո՛,

քարասիրտ, էդ որ շու կուշպէր շնում ես (կշտանալ) ու փորդ-
տաղացնում, մտածում էլ ես, թէ մարդիկ կան, որոնց փորերը
վեց-վեց են անում. այո՞, հիմի շուք յապապարտում կը լինիք ան-
պարծառ ինձ:

—Ղու անուշ արած, աղւյճ, մենք յետոյ էլ կուտենք, մենք ինչ
կը համարձակինք քո առաջին նստել, կը համբերենք, փորը որ կայ՝
նեքքեն է, վերելը չի, որ չըհամբերի. շու մեր մեծաւորն ես, յեռ
քեզ է վայելում կշտանալ, յետոյ քո ոտ ու ձեռի (սպասաւորների)
քերաններին կպչելու բան կը փնայ:

—Այս բաց երկնքի տակ, մեծաւոր ու փոքրաւոր չըկայ, եկէք,
հրամայեցի ես, էդ պատիւը շուք ինձ տուէք բազմութեան մէջ
եղած ժամանակ:

—Ձէ, գլխիդ մեռնիմ, յաշտումը թէ որ մեր չափը կորցնենք,
վատ սովորենք, մարդամիջի էլ անքաղաքավարի կը զարնուինք, առաց
Նաշօն և հեռացաւ ինձանից:

Ես շատ էի ցանկանում Նաշօնի իսկական անձնաւորութիւնը
ճանաչել, բայց տեսնելով՝ որ ինքը փախսէ տալիս, չուզեցայ չարը
գործ շնել նրա անձնուիրութիւնը, վճռեցի այդ մասին այլ ևս
խօսք չըբաց անել:

—Աղւյճ, մտքեցաւ ինձ ձորը մպնելուս Նաշօն, չըլինի թէ
երկիւղ անես, կամ ուրիշ կարծիքներ տանես. եթէ էս ձորումը
կենտ ու կուտո մարդիկ կը պապահին, որ ինձ տեսնելու՝ ձեռք-
ները կը տանեն գլուխները, զտակներին կամաց կը զարկեն, իմա-
ցիր, որ նրանք բոլորը մեր մարդիկն են, որ զիշեր ու ցերեկ իրանց
համար գործ են շինել, որսերի ետեւից հօտ բաշելով ման են գալիս
Յաջողութիւն տուողն Աստուած է, մի տեղ՝ որսկանն է գազանին
սպանում, ուրիշ անգամ՝ գազանն է իր որսորդին որս շինում:

—Ի՞նչ ես առականերով խօսում, Նաշօ, պարզ ասա՛, որ էս
ձորն աւազականոց է ու վերջացրու: Զրպիտի գայինք, եթէ եկել
ենք՝ պիտի տանինք՝ ինչ որ գալու է. մեր արխնը քոնից հօ
աւելի կարմիր չէ, ինչ որ քեզ՝ այն էլ մեզ, մահը թէ այսօր՝ թէ
հարիւր տարուց յետոյ:

—Մոքովդ թող վատ վատ բաներ չանցկենան, աղւյճ ջան-
քեզ մօտենալու համար պիտի իմ լաշի (շիակ) վրայովը լոք տալ:

անց կենալ, իսկ քո սաչից՝ (ի շնորհս քո) ինձ մօտենալը հեշտ բան չի, ասած է անաստուած տեղը կաց, անարխայ (առանց հովանաւորի) տեղը մի՛ կենալ, ոչ չ կենան իմ հաւատարիմներն ու արխանները, հազամ թէ չէ՝ հաւի ձագերի պէս գլուխները հազար ծակերից շուրս կը հանեն:

—Մենք էնպէս կանենք, տնօրինեց Նադօն. շուրս Մուքէլ եղբորս հետ կամաց-կամաց կը դաք, ես ձեզանից մի ձիու մանգզիլ (ասպարէզ) յառաջ կերթամ. աչքներդ վրաս ունեցէք, որտեղ կանգնեցի, յետ մորիկ տուի՝ շուրս էլ կանգնեցէք, ու մի դաք՝ մինչև ես ձեզ ձեռքով չանեմ:

—Ի՞նչ արած, ընկել ենք՝ պիտի. կրենք, ուսերս վեր քաշելով համաձայնութեան նշան տուի և գնացքս ծանրացրի:

Մենք հասանք մի շփուարանցանիլի զառիվայրի, ուր մեզանից յառաջ հասել էր Նադօն. Նա իջել էր ձիուց և սանձը գրաստի պարանոցին ձգած՝ հետեակ ցածանում էր: Մենք էլ նրան հետեւեցինք:

Ձորի խոր անշնշում մի դետակ էր վազում, Նադօն կանգնեց ջրի ափին, հրացանն ուսիցը ցած բերեց և սկսեց ձին ջրել:

Յանկարձ՝ քարափի տակից մի սուր ելեւէջներով սուղոց լսուեց:

Նադօն իւր բուլթ մատրի և ցուցամատրի ծայրերը օշականման միացրեց, բերանը կօխեց և նոյն ելեւէջներով սուղոցը կրկնեց և շարձաւ մեզ ձեռքով արեց:

Ես հասկացայ պայմանական սուղոցը, որ անշուշտ Նադօնի ընկերներին կողմից էր: Սկսեցի յառաջ գնալ:

Այնուհետեւ՝ ինչպէս ձորումը, նմանապէս և սարի հարաւային սորորորումն և լեռնաշաղի անհարթութեան վրայ՝ մեր ճանապարհորդութիւնն անցաւ առանց միջնադէպքի:

Վերջապէս հեռուումն երևեցաւ Վալոց ձորի և Սիւնեաց աշխարհի սահմանադրիլի Առաջիբիլակի գիւղը, ուր մենք զիշերելու էինք: Նադօն կանգնեց և մեզ ձեռքով կանչեց:

—Աղաջ ջան, ցուցամատրը մեկնելով շէպի վայր, ասաց Նադօն, այ քո էս զիշերուաց կացարանը, Աստուած բարի ճանապարհ արեց, աւել պակասը կը բաշխես, որ քեզ նեղութիւն տուի, չըթողի

գնաս սովորական ճանապարհովը, քեզ բերի աւագականոցները քցեցի,
 փառք իմ սրեղծողին՝ մօտդ սեւերես չըմնացի:

Մինչ բերանս կը բանայի պարասխան տալու, Նադոն արդէն
 լեռան լանջը բարձրացել էր: Ուղիղ շարժւած՝ ի՞քս մնացի Նադոյի
 մօտ ամօթով, շարարի խօսքով շնորհակալութիւն, դռնէ, միջոց ռու-
 նեցայ անկողն:

(Շարունակելի)